

Խորհրդի 1993 թվականի մարտի 23-ի 93/12/ԵՏՀ հրահանգ
Որոշ հեղուկ վառելիքներում ծծմբի պարունակության մասին
Պաշտոնական տեղեկագիր, L 074, 27.03.1993թ., էջեր 0081-0083

Ֆիններեն հատուկ հրատարակություն. գլուխ 15, հատոր 12, էջ 0090

Շվեդերեն հատուկ հրատարակություն. գլուխ 15, հատոր 12, էջ 0090

Խորհրդի 1993 թվականի մարտի 23-ի 93/12/ԵՏՀ հրահանգ
Որոշ հեղուկ վառելիքներում ծծմբի պարունակության մասին

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական տնտեսական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 100-րդ հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը (1),

համագործակցելով Եվրոպական պառլամենտի հետ (2),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը (3),

քանի որ օդի որակը բարելավելու համար՝ կապված ծծմբի երկօքսիդի և այլ արտանետումների հետ, Համայնքը պետք է աստիճանաբար կրճատի ծծմբի պարունակությունը նավթաթորվածքում, որն օգտագործվում է ինքնագնաց փոխադրամիջոցներում, այդ թվում՝ օդանավերում, նավերում, ինչպես նաև ջեռուցման, արդյունաբերական և ծովային նպատակներով,

քանի որ, համաձայն 75/716/ԵՏՀ հրահանգի 2(1) և 5(1) հոդվածների (4), անդամ պետություններում գործող դրույթները հեղուկ վառելիքներում ծծմբի պարունակության հետ կապված երկու սահմանաչափ են նախատեսում, և քանի որ այս դրույթները տարբեր անդամ պետություններում տարբեր են,

քանի որ այս տարբերությունները Համայնքի նավթային ընկերություններին պարտավորեցնում են իրենց արտադրատեսակներում ծծմբի առավելագույն

պարունակությունը հարմարեցնելու սահմանված սահմանաչափերին՝ կախված այն հանգամանքից, թե որ անդամ պետություն են մատակարարվում այդ արտադրատեսակները. և քանի որ այդպիսի տարբերությունները խոչընդոտում են այդ արտադրատեսակների առևտրին՝ անուղղակիորեն ազդելով միասնական շուկայի ձևավորման և գործունեության վրա,

քանի որ, բացի դրանից, 75/716/ԵՏՀ հրահանգի 6-րդ հոդվածով սահմանվում է, որ, հաշվի առնելով հասանելի դարձած ցանկացած նոր տեղեկատվություն, Հանձնաժողովը Խորհուրդ հաշվետվություն է ներկայացնում՝ կից ներկայացնելով համապատասխան առաջարկ՝ միասնական արժեք սահմանելու նպատակով,

քանի որ Եվրոպական համայնքների՝ շրջակա միջավայրին ուղղված գործողությունների հաջորդական ծրագրերն (5) ընդգծում են օդի աղտոտումը կանխելու և նվազեցնելու կարևորությունը,

քանի որ վառելիքի որակը կարևոր դեր է խաղում փոխադրամիջոցներից արտագատված աղտոտիչների պատճառով օդի աղտոտվածությունը նվազեցնելու գործում,

քանի որ, բացի դրանից, 81/462/ԵՏՀ որոշման (6) ուժով Համայնքը «Օդի աղտոտիչների մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային տեղափոխության մասին» կոնվենցիայի պայմանավորվող կողմ է, որը, հատկապես, նախատեսում է սահմանափակումների վերաբերյալ ռազմավարությունների և քաղաքականությունների մշակում ու օդի աղտոտման աստիճանաբար նվազեցում և կանխում, որքանով որ դա հնարավոր է,

քանի որ որոշ հեղուկ վառելիքներում ծծմբի պարունակության նվազեցումը հետագայում ծառայում է Համայնքի նպատակներից մեկին, այն է՝ պահպանել, պաշտպանել և բարելավել շրջակա միջավայրը և նպաստել մարդու առողջության պաշտպանությանը՝ շրջակա միջավայրին պատճառված վնասը տեղում շտկելու միջոցով,

քանի որ, համաձայն 75/716/ԵՏՀ հրահանգի, որոշ անդամ պետություններ արդեն սահմանել են 0,2 % կշիռը,

քանի որ անդամ պետությունները քայլեր են ձեռնարկում՝ ապահովելու համար 0,05 % կշռով ծծմբի առավելագույն պարունակությամբ դիզելային վառելիքների աստիճանաբար մատչելիությունը,

քանի որ, որպեսզի հնարավոր լինի ապահովելու մասնիկների արտանետումների համար Համայնքի հատուկ հրահանգներով նախատեսված մակարդակները, Համայնքի

տարածքում շուկայահանված դիզելային վառելիքներում ծծմբի պարունակությունը չպետք է գերազանցի 0,2 % կշիռը՝ սկսած 1994 թվականի հոկտեմբերի 1-ից և 0,05 % կշիռը՝ 1996 թվականի հոկտեմբերի 1-ից. և քանի որ անդամ պետություններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ այդ նպատակին հասնելու համար,

քանի որ շարժիչային տրանսպորտային միջոցներում նավթաթորվածքի օգտագործման ծավալների ընդլայնումը լրացուցիչ ջանքեր է ենթադրում՝ կապված դիզելային վառելիքի որակի հետ, որպեսզի հնարավոր լինի սահմանափակելու օդի որակի վրա այդ օգտագործման հետևանքով բացասական ազդեցությունը. և քանի որ դիզելային վառելիքում ծծմբի պարունակության համար առավելագույնը 0,05 % կշիռ սահմանելը, որը կիրառելի է 1996 թվականի հոկտեմբերի 1-ից, արդյունաբերական ոլորտին բավարար ժամանակ է տալիս՝ պահանջվող տեխնիկական ճշգրտումներն իրականացնելու համար,

քանի որ նավթաթորվածքների և միջին խտության նավթի այլ օգտագործումը ջանքեր են պահանջում՝ նվազեցնելու համար օդի աղտոտվածությունը, որտեղ պետք է հաշվի առնել, թե դրանք որքանով են նպաստում այդ գործողություններին՝ հաշվի առնելով օդի որակի բարելավումը և շրջակա միջավայրի հետ կապված ծախսերն ու օգուտները, և քանի որ Հանձնաժողովը Խորհուրդ առաջարկ է ներկայացնում, որտեղ առաջարկում է ծծմբի պարունակության ավելի ցածր սահմանաչափ

և ավիացիոն կերոսինի համար սահմանում է նոր սահմանային թույլատրելի արժեքներ ,

քանի որ, չմշակված նավթի մատակարարման մեջ չնախատեսված փոփոխությունները, որոնք հանգեցնում են ծծմբի միջին պարունակության մեծացմանը, կարող են, հաշվի առնելով ծծմբի մաքրման հնարավորությունը, անդամ պետության սպառողներին այդ արտադրանքները մատակարարելու հարցը վտանգի տակ դնել,

քանի որ ծովային նավերում օգտագործվող նավթաթորվածքներում ծծմբի պարունակության ցածր մակարդակը կարող է տեխնիկական և տնտեսական որոշակի խնդիրներ առաջացնել Հունաստանի համար, և քանի որ սահմանափակ տևողությունից հոգուտ Հունաստանի շեղվելը չպետք է թուլացնի նավերում օգտագործվող նավթաթորվածքների առևտուրը, և քանի որ Հունաստանի գուման գործարանները բավարարում են նավթաթորվածքի և միջին խտության նավթի միայն ներքին պահանջարկը, և քանի որ վերջնական այրման նպատակով Հունաստանից այլ անդամ պետություն արտահանումները պետք է համապատասխանեն տվյալ անդամ

պետությունում կիրառելի հրահանգի դրույթներին, և քանի որ Հունաստանը կարող է հինգ տարով շեղվել սահմանված ժամկետից՝ նախքան նավերում օգտագործվող՝ ծծմբի անհրաժեշտ քանակությամբ նավթաթորվածքները ներկայացնելը, և քանի որ այդ ժամանակահատվածն ավարտվում է 1999 թվականի սեպտեմբերի 30-ին,

քանի որ պետք է տեղում անցկացվող ստուգումներ իրականացվեն՝ պարզելու համար շուկայահանված նավթաթորվածքներում և միջին խտության նավթում ծծմբի պարունակությունը, և քանի որ այդ նպատակով անհրաժեշտ է դրույթ սահմանել՝ լավագույն հասանելի տեխնոլոգիաների գաղափարի վրա հիմնված մեկ ընդհանուր մեթոդի համար,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

1. Սույն Հրահանգի նպատակներով՝

ա) «նավթաթորվածք» նշանակում է ՀԱ 2710 00 69 ծածկագրին դասվող ցանկացած նավթամթերք կամ ցանկացած նավթամթերք, որն իր թորման սահմանափակումների պատճառով դասվում է որպես վառելիք գործածվող և թորման միջին ֆրակցիաներ ունեցող նյութերի դասին և որի առնվազն 85 %-ն ըստ ծավալի՝ ներառյալ թորման կորուստները, թորման է ենթարկվում 350° C-ում,

բ) «դիզելային վառելիք» նշանակում է նավթաթորվածք, որն օգտագործվում է ինքնագնաց փոխադրամիջոցներում՝ համաձայն 70/220/ԵՏՀ հրահանգի (7) և 88/77/ԵՏՀ հրահանգի (8):

2. Սույն Հրահանգը չի կիրառվում այն նավթաթորվածքների նկատմամբ, որոնք

— պարունակվում են անդամ պետության և երրորդ երկրի միջև սահմանը հատող նավերի, օդանավերի կամ շարժիչային տրանսպորտային միջոցների վառելիքի բաքերում,

— նախատեսված են վերջնական այրումից առաջ վերամշակման համար:

Հողված 2

1. Մասնիկների արտանետումների համար Համայնքի հատուկ հրահանգներով նախատեսված մակարդակներն ապահովելու համար անդամ պետություններն արգելում են դիզելային վառելիքի շուկայահանումը Համայնքի տարածքում, եթե դրանց մեջ պարունակվող ծծմբի տեսքով ծծմբական միացությունների քանակը (այսուհետ՝ ծծմբի պարունակություն), գերազանցում է՝

— 0,2 % կշիռը՝ սկսած 1994 թվականի հոկտեմբերի 1-ից,

— 0,05 % կշիռը՝ սկսած 1996 թվականի հոկտեմբերի 1-ից:

Անդամ պետությունները քայլեր են ձեռնարկում՝ ապահովելու համար, որ առաջին պարբերության մեջ նշված դիզելային վառելիքները, որոնց մեջ ծծմբի պարունակությունը չի գերազանցում 0,05 % կշիռը, աստիճանաբար մատչելի դառնան:

2. Անդամ պետություններն արգելում են 1-ին պարբերության մեջ նշված նավթաթորվածքներից բացի այլ նավթաթորվածքների կամ այդ նույն պարբերությունով սահմանված նպատակներից բացի այլ նպատակներով օգտագործվող նավթաթորվածքների շուկայահանումը Համայնքում՝ սկսած 1994 թվականի հոկտեմբերի 1-ից՝ բացառությամբ ավիացիոն կերոսինի, եթե դրանց մեջ ծծմբի պարունակությունը գերազանցում է 0,2 % կշիռը:

Մինչև 1994 թվականի հունվարի 1-ը Հանձնաժողովը Խորհուրդ ներկայացված հաշվետվության մեջ նշում է, որ ծծմբի երկօքսիդի արտանետումները վերահսկելու գործում առաջընթաց է նկատվել: Միևնույն ժամանակ այն Խորհուրդ է ներկայացնում երկրորդ փուլին անցնելու մասի առաջարկ՝ ներկայացնելով ավելի ցածր սահմանաչափ, սկսած ամենաուշը 1999 թվականի հոկտեմբերի 1-ից, և ավիացիոն կերոսինի համար սահմանելով նոր սահմանային թույլատրելի արժեքներ :

Խորհուրդը գործում է որակյալ մեծամասնությամբ ամենաուշը մինչև 1994 թվականի հուլիսի 31-ը:

3. Եթե չմշակված նավթի կամ նավթամթերքների մատակարարման մեջ չնախատեսված փոփոխությունների հետևանքով անդամ պետության համար դժվարանում է նավթաթորվածքներում ծծմբի պարունակության առավելագույն սահմանաչափի կիրառումը, տվյալ անդամ պետությունը դրա մասին տեղեկացնում է Հանձնաժողովին: Հանձնաժողովը տվյալ անդամ պետության տարածքում կիրառելու համար վեց ամիս

ժամանակահատվածը չգերազանցող ժամկետով ավելի բարձր սահմանաչափ է նախատեսում և իր որոշման մասին տեղյակ է պահում Խորհրդին: Յուրաքանչյուր անդամ պետություն կարող է մեկ ամսվա ընթացքում Խորհրդի առջև վիճարկել այդ որոշումը: Խորհուրդը, գործելով որակյալ մեծամասնությամբ, կարող է երկու ամսվա ընթացքում մեկ այլ որոշում ընդունել:

Շեղման միջոցով Հունաստանի կառավարությունը կարող է, մինչև 1999 թվականի սեպտեմբերի 30-ը, թույլ տալ նավերի համար օգտագործվող, 0,2 % կշիռը գերազանցող ծծմբի պարունակությամբ նավթաթորվածքների շուկայահանումը:

Հոդված 3

Ոչ մի անդամ պետություն, սկսած 2(1) և (2) հոդվածներում նշված կիրառման ժամկետներից, չի կարող արգելել, սահմանափակել կամ կանխել նավթաթորվածքի շուկայահանումը դրանց մեջ ծծմբի պարունակության հիմքով, եթե այդ նավթաթորվածքները համապատասխանում են սույն Հրահանգի պահանջներին:

Հոդված 4

1. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ նմուշառման միջոցով ստուգելու համար ծծմբի պարունակությունը շուկայահանված նավթաթորվածքներում:

2. Ստանդարտ մեթոդը, որն ընդունվել է՝ որոշելու համար ծծմբի պարունակությունը շուկայահանված նավթաթորվածքներում, բնորոշվում է ISO (8754) մեթոդով: Շուկայահանված նավթաթորվածքներում ծծմբի պարունակությունը որոշելու համար անցկացված ստուգումների արդյունքների վիճակագրական մեկնաբանությունն իրականացվում է ISO 4259 (1979) ստանդարտի համաձայն:

Հոդված 5

1994 թվականի հոկտեմբերի 1-ից 75/716/ԵՏՀ հրահանգը փոխարինվում է սույն Հրահանգով:

Հողված 6

Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը մինչև 1994 թվականի հոկտեմբերի 1-ը: Նրանք դրա մասին անմիջապես տեղեկացնում են Հանձնաժողովին:

Եթե անդամ պետություններն ընդունում են այդ ակտերը, դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

Հողված 7

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 1993 թվականի մարտի 23-ին:

Խորհրդի կողմից՝ Նախագահ Ս. Աուկեն

1) ՊՏ թիվ C 174, 05.07.1991թ., էջ 18 և ՊՏ թիվ C 120, 12.05.1992թ., էջ 12:

2) ՊՏ թիվ C 94, 13.04.1992թ., էջ 209 և ՊՏ թիվ C 337, 21.12.1992թ.:

3) ՊՏ թիվ C 14, 20.01.1992թ., էջ 17:

4) ՊՏ թիվ L 307, 27.11.1975թ., էջ 22: 87/219/ԵՏՀ հրահանգով փոփոխված հրահանգ (ՊՏ թիվ L 91, 03.04.1987թ., էջ 19):

5) ՊՏ թիվ C 112, 20.12.1973թ., էջ 1, ՊՏ թիվ C 139, 13.06.1977թ., էջ 1 և ՊՏ թիվ C 46, 17.02.1983, էջ 1:

6) ՊՏ թիվ L 171, 27.06.1981թ., էջ 11:

7) ՊՏ թիվ L 76, 06.04.1970թ., էջ 1: Վերջին անգամ 91/441/ԵՏՀ հրահանգով (ՊՏ թիվ L 242, 30.08.1991թ., էջ 1) փոփոխված հրահանգ:

8) ՊՏ թիվ L 36, 09.02.1988թ., էջ 1: Վերջին անգամ 91/542/ԵՏՀ հրահանգով (ՊՏ թիվ L 295, 25.10.1991թ., էջ 1) փոփոխված հրահանգ: